ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4 , հեռ.՝ (+374 60) 830 – 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«20» 06 2025թ.
No 007221

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ
ՏԻԿԻՆ ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ
(հասցե՝ Կոտայքի մ., ք. Չարենցավան, 3 թղմ. շ. 4, բն. 43/44,
էլ. փոստի հասցե՝ info.hairmitage@gmail.com)

Հարգելի՛ տիկին Հակոբյան,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2025 թվականի հունիսի 17-ի ««Լեսօնա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը թիվ ՀԳ-01804/25 վարույթով շահագրգիռ անձ ճանաչելու մասին» թիվ 406-Ա որոշման պատճենը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ նաև՝ **Համակարգ**) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Առդիր՝ «3» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ**

Կատարող՝ Մերի Առաքելյան
Սպառողների շահերի պաշտպանության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (266)

www.competition.am կայքում հրապարակման օրը՝ 15 հուլիսի 2025 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հունիսի 2025 թվականի թիվ 406-Ա

«ԼԵՍՕՆԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԹԻՎ ՀԳ-01804/25 ՎԱՐՈՒՅԹՈՎ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԱՆՁ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2025 թվականի հունիսի 17-ի նիստում, քննարկելով «Լեսօնա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) թիվ ՀԳ-01804/25 վարույթով (այսուհետ նաև՝ **Վարույթ**) շահագրգիռ անձ ճանաչելու վերաբերյալ միջնորդությունը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովը 2025 թվականի ապրիլի 29-ի «Անհատ ձեռնարկատեր Հասմիկ Հակոբյանի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 281-Ա որոշմամբ հարուցել է Վարույթը:

Ընկերությունը 2025 թվականի հունիսի 16-ին ներկայացրել է իրեն շահագրգիռ անձ ճանաչելու վերաբերյալ միջնորդություն այն հիմնավորմամբ, որ անհատ ձեռնարկատեր Հասմիկ Հակոբյանի (այսուհետ նաև՝ **ԱՁ Հ. Հակոբյան**) գործողությունների հետևանքով անմիջականորեն խախտվել են Ընկերության իրավունքները:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 74-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ շահագրգիռ է այն անձը, որի իրավունքներն իրավախախտման հետևանքով անմիջականորեն խախտվել են:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անձը շահագրգիռ է ճանաչվում իր միջնորդության հիման վրա Հանձնաժողովի ընդունած՝ նրան շահագրգիռ անձ ճանաչելու մասին որոշմամբ:

Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի պաշտոնական կայքում (aipo.am) առկա տեղեկատվության համաձայն՝ Ընկերության անվամբ ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման (ԱԾՄԴ) 3-րդ և/կամ 35-րդ դասերի ապրանքների և ծառայությունների համար ազգային

ընթացակարգով գրանցվել և ՀՀ-ում իրավական պահպանություն են ստացել հետևյալ անվանումներով համակցված ապրանքային նշանները.

1. «H HERMITAGE EXCLUSIVE PERFUMES»՝ գրանցվել է 2012 թվականի դեկտեմբերի 12-ին, որում «EXCLUSIVE PERFUMES» արտահայտությունն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ (գրանցման հերթական համար՝ թիվ 19213),

2. «H HERMITAGE PERFUMES & COSMETICS»՝ գրանցվել է 2018 թվականի հունիսի 28-ին, որում «PERFUMES» և «COSMETICS» բառերն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն (գրանցման հերթական համար՝ թիվ 35069),

3. «STYLE BY HERMITAGE SHOES AND FASHION»՝ գրանցվել է 2018 թվականի նոյեմբերի 29-ին, որում բացի «HERMITAGE» գրառումից մնացած բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն (գրանցման հերթական համար՝ թիվ 28218),

4. «H HERMITAGE PROJECTS»՝ գրանցվել է 2022 թվականի ապրիլի 13-ին, որում «PROJECTS» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ (գրանցման հերթական համար՝ թիվ 34692),

5. «HERMITAGE PROJECTS»՝ գրանցվել է 2024 թվականի հունիսի 27-ին, որում «PROJECTS» գրառումն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ (գրանցման հերթական համար՝ թիվ 39898),

6. «HERMITAGE PROJECTS»՝ գրանցվել է 2024 թվականի հունիսի 27-ին, որում «PROJECTS» գրառումն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ (գրանցման հերթական համար՝ թիվ 39900),

7. «HERMITAGE PERFUMES & COSMETICS»՝ գրանցվել է 2024 թվականի հուլիսի 11-ին, որում «PERFUMES & COSMETICS» գրառումն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ (գրանցման հերթական համար՝ թիվ 39983),

8. «HERMITAGE PERFUMES & COSMETICS»՝ գրանցվել է 2024 թվականի հուլիսի 11-ին, որում «PERFUMES & COSMETICS» գրառումն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ (գրանցման հերթական համար՝ թիվ 39984):

Սույն գործով Վարույթը հարուցվել է «H» տառի և «HAIRMITAGE», «Hairmitage», «hairmitage» բառերի օգտագործման առնչությամբ ԱՁ Հ. Հակոբյանի վարքագծում շփոթության առաջացման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքերով:

Հետևաբար, Վարույթի շրջանակներում քննարկվող իրավախախտմամբ կարող են անմիջականորեն շոշափվել Ընկերության իրավունքները:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 74-րդ հոդվածի 4-րդ մասով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Լեսօնա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ճանաչել թիվ ՀԳ-01804/25 վարույթով շահագրգիռ անձ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2025 թ. հունիսի 17
Երևան